

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Christians and Jews in the Ottoman Empire, the functioning of a plural society, ed. by Benjamin Braude and Bernard Lewis, volum I: The Central Lands, Holmes & Meier Publishers, Inc. New York, London 1982, p. IX+449.

Մերձավոր Արեւելքի, Փոքր Ասիայի եւ արեւելեան Եւրոպայի մէջ մեծ փոփոխութիւններ յառաջ բերաւ Օսմանեան տիրապետութիւնը իր գերիշխանութեան դարերուն: Այս շրջանին՝ մշակոյթ ու կրօն կրեցին ազդեցութիւններ: Այս ուսումնասիրութիւնը կը շօշափէ Օսմանեան կայսրութեան պատմութեան բազմատեսակ խնդիրներ՝ դնելով զանոնք քննութեան որոշ ծիրի մը մէջ: Հըրատարակիչներն ամփոփած են երկու հատորներու մէջ խումբ մը մասնագէտներու քննութեան արդիւնքը, որոնք կատարած են համեմատութիւնը պաշտօնական թուղթերու, բնագիրներու եւ դիւանական նիւթերու՝ զանազան լեզուներէ (հայերէն, արաբերէն, եբրայեցերէն, յունարէն, թուրքերէն): Ուսումնասիրութիւնը, անտարակոյս նպաստ մըն է նաեւ վերջին դարերու հայերու մշակութային եւ ընկերային պատմութեան որոշ հարցերու հետազոտութեան, լուսարանութիւն մը՝ Ի. դարը բացող դէպքերու, որոնք առնչուած են նախընթաց ժամանակի հայ-օսմանական սերտ յարաբերութիւններու հետ:

Գիրքին հրատարակիչ խմբագիրներն են Benjamin Braude՝ օգնական ուսուցիչ Boston Collegeի պատմութեան ճիւղին եւ Harvard համալսարանին մէջ՝ հետազոտող աշխատակից Միջին Արեւելքի գիտութիւններու կենդրոնին: Երկրորդը՝ Bernard Lewis՝ Princetonի մէջ ուսուցիչ Մերձավոր Արեւելքի գիտութիւններու, եղած է Բարձրագոյն Ուսումնասիրութեան հաստատութեան երկարամեայ անդամ:

Աշխատութեան սկիզբը՝ էջ V-VII, դրուած է բովանդակութիւնը ինչպէս առաջին նաեւ երկրորդ հատորին: Էջ VIIIի վրայ կը տրուի համառոտագրութեան ցանկը եւ

չատ կարճ ծանօթութիւն մը՝ զբաղարձութեան համար (թուրքերէնի եւ արաբերէնի):

Ուսումնասիրութեան յօդուածաշարքն արդասիքն է «The Millet System: History and Legacy» նշանաբանին տակ 1978ի դարունը եւ ամառը Princetonի համալսարանին մէջ դուրսուած դիտաթողովին՝:

Ներածութեան մէջ՝ հրատարակիչները յաջող կերպով կը դժեն ընդհանուր պատկեր մը կայսրութեան կէս հազարամեակի փառքի ու բարքի մասին: Բազմազգեան եւ տարբեր կրօններու հասարակութիւն մըն էր ան (մահմետական, քրիստոնէայ, հրեայ եւ այլ ցեղեր): Օսմանցիներն իրենց գերիշխանութեան տակ կրցան պահել տարբերութիւններու այս հասարակութիւնը իրենց դրամական, մանաւանդ զինուորական ոյժի կենդրոնացումով: Այս ուսումնասիրութիւնը նոր տեսանկիւնէ մը կ'ուզէ դիտել Միջին Արեւելքի պատմութեան այս շատ կարեւոր կայսրութիւնը — «In recent studies on the Middle East, the dominant themes have been nationalism on the one hand and modernization on the other, to the neglect of religious and communal issues. The continuing importance of religion and community has become increasingly obvious and a serious and scholarly study of the background and implications of these factors is overdue. The papers presented in these volumes attempt to answer both these needs»¹:

Մահմետական ազգեր արդէն թուրքերէն առաջ գրաւած էին Միջին Արեւելքի քրիստոնէայ երկիրները, Հիւսիսային Ափրիկէ, Իբերիայի եւ Միջերկրականի շատ մը կղզիներ: Օսմանեան կայսրութիւնը եւ քաղաքականութիւնը մաս էր մահմետական եւ քրիստոնէայ տարբերութիւններու միջեւ եղած յարաբերութիւններուն: Արդէն արաբական գերիշխանութիւնը պատրաստած էր հողը Օսմանեան կայսրութեան, իսկ Օսման եւ Բիւզանդացի ժողովուրդը կերտեցին նոր մշակոյթ մը: Շուտով կրցան Բիւզանդացիներ ունենալ իրենց Պատրիարքը իբր ներկայացուցիչ Բ.

¹ Հմմտ. էջ IX:
² Անդ, էջ 1-34:
³ Անդ, էջ 1-2:

Դրան առջեւ: Ընդհանրապէս, եկեղեցական իշխանութիւնը գործիք էր կայսրութեան ձեռքին մէջ կառավարելու հպատակ ժողովուրդը:

Նաեւ Հայ ազգի պատմութիւնը վերջին դարերուն մեծապէս մաս կը կազմէ այս կայսրութեան ընթացքին: Հրատարակիչները կը դրեն. «Հայկական երականութեան եւ հայկական երազներու մէջ եղած անդունդը մեծ էր: Հայերը միշտ մասնակից էին Միջին Արեւելքի պատմութեան մէջ եղած զրեթէ թուրք կռիւներուն եւ միշտ յաղթուողին կողմէ: Որեւէ ժամանակ՝ յոյն, պարսիկ, արաբ, մոնղոլ, ռուս կամ թուրք ժողովուրդները եղած են իրենց թշնամիները: Հայկական անկախութեան շրջանները եղած են կարճ: Հայկական ամէնէն հպարտ յիշատակներէն է քրիստոնէութեան դարձը վաղ ժամանակներու մէջ եւ վճռակամ համակրութիւնը ներու մէջ եւ վճռակամ համակրութիւնը...»⁴: Էջ 20-միտինսայ վարդապետութեան...»: Էջ 20-միտինսայ վարդապետութեան մէջ կը ներկայացնէ վիճակը Հայ ազգին, որ միշտ եղած է յաղթանակներու մէջ կամ բռնակալներու զաղթականութեան մէջ կամ բռնակալներու զաղթականութեան մէջ կամ բռնակալներու զաղթականութեան մէջ: Այսպէս թե՛ զարէն մինչեւ ժե. դարու սկիզբը հայերը մասնաւոր գեր չեն խաղացած Օսմանեան կայսրութեան մէջ: Ընդհակառակը, անոնց ակնարկը դարձաւ Արեւելք, ուր Շահ Աբաս բունի կատարած տեղափոխութեան աւարտին ներգաղթող հայերուն մասնաւոր առանձնաշնորհումներ տուաւ: Սակայն անոր ընտանիքի անկումէն ետք ու երբ արդէն հրեայ վաճառականներու զերթնքն ալ տկարացած էր, հայերը սկսան դարձնալ եւ երեւնալ Օսմանեան կայսրութեան մէջ: Անոնց գիրքը բարեօրէցաւ մահմետական ժե. դարուն: Անոնք եղան մաքսանաւանդ ժե. դարուն, տեղացի տուներու պատասխանատուներ, տեղացի փաշաներու սեղանաւորներ, պերճ իրեր հայթայթողներ, փողերանոցի պաշտօնեաներ եւ զործակալներ հեռաւոր վաճառականութեան: Մինչ այս յարաճուն գործունէութեան շրջանը տեղի կ'ունենար Կ. Պոլիս, Հալէպ եւ Իզմիր, հայկական բնակչութեան մեծամասնութիւնը կը փնար իբր շինական Անատոլի մէջ, ինչպէս եղած էր դարեր շարունակ:

⁴ Անդ, էջ 20: Սակայն հոս հրատարակիչները անշուշտ սխալի մէջ են, երբ կը հաստատեն, թէ հայերը միտինսայ վարդապետութեան յարած են: Սխալ մը, որ տակաւին խումբ մը գիտնականներու եւ ոչ գիտնականներու կողմէն կը գործուի, մինչ խնդրել այսօր բացայայտ է:

րունակ: Այս դաւառին մէջ ստացած է իր նախնական ուսումը, դէմք մը, որ պիտի ձեռնարկէր հայկական վերածնունդի մեծագոյն շարժումին: Մխիթար Սեբաստացի (1676-1749) հիմնեց Հայ կաթողիկէ կրօնաւորական կարգ մը, որուն նպատակն էր օգնել ու մէջտեղ բերել իր ժողովուրդին մշակութային յարուստը եւ արեւմտականացումը: Մխիթարեան Հայերը վերակենդանացուցին հայերէն լեզուն, մշակեցին հայկական դրականութիւնը, տարածեցին արեւմտեան դաղափարներ թարգմանութիւններով, հիմնեցին ուսումնական եւ ժողովրդական թերթեր, հաստատեցին դպրոցներու ցանց մը եւ հիմը դրին նորագոյն հայկական պատմագրութեան: Սակայն այս ամբողջը առաջնորդուած էր վանքերէն, որոնք կը դտնուէին Օսմանեան կայսրութեան դուրս, ուր the Fathers had been exiled by the hostility of the established Armenian church⁵:

Ժե.-ԺԸ. դարաշրջանին հայկական հասարակութիւններն ունեցան իրենց առաջնորդները. նախ՝ Ամիրանները (վաճառականներ, դրամատէրեր, եւն.). երկրորդ՝ Մխիթարեաններու հեղինակութեան տակ կերտուած մշակութային վերածնունդի շարժումին ղեկավարները: Իսկ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն ալ աշխատեցաւ Ամիրաններու հեղինակութիւնը օգտագործել իր իշխանութիւնը ծաւալելու համար:

Կաթողիկէ հայերու վիճակը ծանր էր: 1860ին սակայն անոնք ճանչցուեցան իբր ինքնուրոյն հասարակութիւն, երբ Փրանսական կառավարութիւնը պաշտպան հանդիսացաւ անոնց:

Ժթ. դարու կէսին վերանորոգումի ձգտում մը սկսաւ, ուր շատեր աշխատեցան նոր յարաբերութիւններ մշակել կայսրութեան հետ: Ասոր կողքին զարգացաւ նաեւ ազատամիտ ուղղութիւնը: Այս շարժումը եւ թափը առաջնորդեցին նոր Սահմանադրութեան: Աղգային Սահմանադրութիւնը նոր յոյս բերաւ հայերու մէջ: Օսմանեան կայսրութեան հպատակ հայերը աւելի լաւ դիրքի մէջ էին քան Ռուսահայաստանի բնակչութիւնը: Հասկնալի է, որ անկախութեան շարժումները սկսան Ռուսահայաստանէն: Այս ժամանակը սկսան դրդուեց թրքական ազգայնա-

⁵ Անդ, էջ 21:

ները կատարած են Պալեաններ³⁰: Ամիրաները սքանչելի դրամատիկ-ձեռնարկողներ էին: Անոնք դրամադուրը հարկաւոր էր Օսմանեան դրամական կազմի գործունէութեան համար: Անոնք դեր խաղացին նաեւ տուրքերու վարչութեան մէջ:

Ամիրաներու ոյժը կախեալ էր իրենց դրամական կարողութենէն ու տնտեսական ճարտարութենէն: Անոնց ճակատագիրը շատ անգամ կապուած էր նաեւ քաղաքական յարաբերութիւններու, որոնք կրնային զերենք նոյնիսկ կործանումի հասցնել, ինչպէս եղաւ 1819ին Տիւզեան ընտանիքի դժբախտ պարագան³¹:

Էջ 177-180 Պարսուճեան կը ներկայացնէ Ամիրաներու դերը Հայկական Միւլէթի մէջ: Անոնք հզօրապէս ներքին այս Միւլէթի մէջ: Հայկական Պատրիարքութիւնը հոգեւոր ու ժողովրդական առաջնորդն էր ազգին. Ամիրաները շատ անգամ իրենց հեղինակութիւնը կը բանեցնէին Պատրիարքական Աթոռին վրայ:

Նաեւ Հայ մշակուածի վերածնունդին մէջ անոնք դարձան կարեւոր ազդակներ, հիմնելով դպրոցներ, մշակութային ընկերութիւններ ու պարբերականներ: Անոնք քաջաբերեցին դրական շարժումները եւ կատարեցին բարերար գործ հրատարակութեամբ կրօնական ու դաստիարակչական գիրքերու կամ հոգալով նիւթականը եւրոպական համալսարան յաճախող Հայ ուսանողներու: Ամիրաները նոյն եռանդով ձեռնարկեցին եկեղեցիներու կամ հիւանդանոցներու շինութեան:

Իրենց այս գերազանց դերին մէջ Ամիրաներ երբեմն սխալ վարմունք ալ ունեցան հանդէպ Ազգին³², որ օրինակ՝ անոնք շատ անգամ չէին հետաքրքրուեր գաւառի Հայերու դժբախտ ճակատագրով:

Ամիրաները հանդիսացան Հայ Առաքելական Եկեղեցւոյ պաշտպան, նոյնիսկ թըշնամանելով Փրանսացի կառավարական ներկայացուցիչը³³: Անոնք մէջ չպակեցան սակայն կաթողիկէներ. եւ Տիւզեան եղբայրներու սպանութեան պատճառներէն մին եղաւ այդ³⁴:

Մինչեւ 1846 Ամիրաներ կ'ընտրէին Պատրիարքները, առանց նկատի առնելու նոյնիսկ եկեղեցական նուիրապետութեան կամ Արհեստաւորներու (Էսնաֆներու) դադարները³⁵:

Յառաջադիմական ուսեալ երիտասարդներու եւ պահպանողական Ամիրաներու միջեւ պայքարը եղաւ անխուսափելի եւ տարածուեցաւ ոչ միայն քաղաքական, այլ եւ մշակութային, տնտեսական եւ ընկերային գետնի վրայ³⁶: Վերջապէս սահմանադրական շարժումը, որ հետզհետէ աճեցաւ, հանդիսացաւ անխորտակելի ոյժ մը Ամիրաներու դիմաց:

Հեղինակը կը գրէ. «Ամիրաներու կրկնակի դերը պատկերացնելու այս մեր ձեռնարկը կ'առաջնորդէ մեզ հակասութեան... կը դատուինք դասի մը դիմաց, որ բարդ եւ կենսական պարտականութիւն մը ունէր Օսմանեան կայսրութեան դրամական եւ տնտեսական վարչութեան մէջ եւ սակայն զուրկ էր որեւէ ոյժէ այդ շրջանակին մէջ: Ասոր հակառակ, ան ունէր թէ՛ կարեւոր պարտականութիւն մը եւ թէ՛ մեծ ոյժ Հայկական Միւլէթի մէջ»³⁷: Ապա յօդուածագիրը կ'եզրափակէ այս խօսքերով. «Ամիրաներու առաքելութիւնը սահմանուած էր Օսմանեան կառավարութենէն՝ վարել թէ՛ իր դրամական տնտեսական կազմը եւ թէ՛ Հայկական Միւլէթը»³⁸: Էջ 185-257 յօդուածագիրները կ'անդրադառնան յոյն, հրեայ եւ ալպանացի Միւլէթներու վրայ:

Թէ ինչ դեր ունեցան քրիստոնեաներ եւ հրեաներ ԺԹ. դարուն Օսմանեան կեանքի մէջ կը ներկայացնէ Ա. Հատորին ջորջորդ մասը³⁹:

Այս դարուն Հայեր առեւտրական ու տնտեսական գետնի վրայ ունեցան կարեւոր

³⁴ Հմմտ. էջ 180:

³⁵ Անդ:

³⁶ Անդ:

³⁷ Անդ, էջ 180-181:

³⁸ Անդ, էջ 181:

³⁹ The Role of Christians and Jews in Ottoman Life during the Nineteenth Century and After, ԺԳ. ԺԹ. գլուխ, էջ 261-434:

³⁰ Անդ:

³¹ Հմմտ. էջ 176:

³² Հմմտ. էջ 178-179:

³³ Հմմտ. էջ 179:

դիրքեր. յատկապէս կայսրութեան արեւելեան նահանգներու մէջ:

Տրապիզոնի մէջ ալ Հայերը վաճառականական միջնորդ դեր ունեցան առուտուրի զանազան մարդերու վրայ: Անոնք շատ անգամ կատարեցին գործառնական պաշտօններ⁴⁰: Նաեւ նաւային ընկերութիւններու մէջ գտնուեցան Հայ առաջնորդ դէմքեր, որոնք յանուանէ կը յիշուին⁴¹: Էջ 308-310 դարձեալ կը յիշուին մեծ թիւով Հայ առեւտրականներ:

Մշակութային ասպարէզի վրայ Հայերը նոյնպէս հանդիսացան իբր բազմաթիւներ: Կ. Պոլսոյ նոր թատրոնի զարգացումին մէջ անոնք առաջնորդի դեր ունեցան թէ՛ իբր արտադրող եւ թէ՛ իբր դերասան: Տիգրան Զուհաճեան, որ կ'անուանուի «Թուրքիոյ Օրհնահան», որ կ'ընտանուի թատերախաղերու րայի եւ երաժշտական թատերախաղերու հայրը» եւ ուրիշ Հայեր ունեցան սերտ համագործակցութիւն թուրքերու հետ եւ մեծապէս նպաստեցին թուրքիոյ մշակութային արեւմտականացումին⁴²:

Հայեր տուին տնօրէններ հեռադրական կայսրաններու⁴³: Անոնք եղան ձեռնարկող ու բարենորոգիչ տնտեսական ու դրամական մարդերու վրայ⁴⁴. ունեցան պաշտօնական թարգմանչական գործունէութիւն⁴⁵. տուին պետական⁴⁶ ինչպէս եւ զինուորական⁴⁷ անձնակազմութիւններ:

Հայեր ունեցան միշտ իրենց նպաստը տեղական, ինչպէս նաեւ օտար կազմակերպութիւններու ու վարչական կազմերու մէջ: Աւելի յստակ պատկեր մը կու տան մեզի էջ 347-362ի վիճակագրական ցանկերը:

1857ին առաջին անգամ ըլլալով Կալաթայի մէջ հիմնուեցաւ քաղաքապետութիւն մը եւրոպական նմոյշով: Կալաթա քաղաքին այն մասն էր, ուր կը բնակէին յատկապէս սոսաներ եւ ոչ-խալամներ: Այս փոքրամասօտարներ եւ ոչ-խալամներ: Այս փոքրամասօտարները, որոնց կարգին եւ Հայեր, նընութիւնները, որոնց կարգին վարչութեան արեւմտականացումն⁴⁸: Նոր Սահմանադրութիւնն

⁴⁰ Հմմտ. էջ 290:

⁴¹ Հմմտ. էջ 293-295:

⁴² Հմմտ. էջ 323:

⁴³ Անդ:

⁴⁴ Հմմտ. էջ 325:

⁴⁵ Հմմտ. էջ 326:

⁴⁶ Հմմտ. էջ 327, 330:

⁴⁷ Հմմտ. էջ 332:

⁴⁸ Հմմտ. էջ 369-385:

ալ բերաւ շատ փոփոխութիւններ: Ոչ-խալամներ ընդունուեցան Սորհրդարանի մէջ եւ կամ հասան բարձր պաշտօններու⁴⁹: Գրիգոր Օտեան Էֆէնտի բերաւ իր բաժինը Սահմանադրութեան պատրաստութեան գործին մէջ:

Միութենական շարժումները կատարեցին մեծ փոփոխութիւններ այս հսկայ կայսրութեան մէջ⁵⁰:

1908 Յուլիսին մեծ խանդավառութեամբ ողջունուեցաւ Նոր Սահմանադրութիւնը: Հայկական հասարակութիւնը յունականին պէս մենաքար (մոնոլիթ) կազմուածք չունէր եւ այս կը ցոլար անոր բռնած դիրքին մէջ սահմանադրական վարչաձեւին հանդէպ: Ան քաղաքականօրէն բաժնուած էր Պատրիարքութեան եւ Ազգային Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կուսակցութեան միջեւ: Ինչպէս յոյները, Հայերը չունէին պետութիւն մը, որով կարենային իրենց ինքնութիւնը ճշգրտել: Սակայն ազգայնականութեան աճող զգացումը մտաւորականութեան մէջ ստեղծեց զօրաւոր տենչ մը անկախութեան եւ վերջնական դերիշխանութեան⁵¹:

Միութենականներու նպատակն էր վերահաստատել Օսմանեան պետութեան լի գերիշխանութիւնը: «Միայն այսպէս պետութիւնը կարող պիտի ըլլար կատարել իր բոլոր պարտքերն ու պարտականութիւնները»⁵²:

Օսմանահայ հասարակութիւնը քաղաքականօրէն միատեսակ չէր: Ան բաժնուած էր երկու ճնշող իշխանութիւններու միջեւ (Օսմանեան եւ Ռուսական) եւ ստիպուած էր պայքարել երկու դիրքի վրայ: Դեռ աւելի, Հայեր բաժնուած էին, ինչպէս տեսանք, երկու հակադիր խումբերու՝ հիմնական ընկերային-տնտեսական գծի վրայ՝ Դաշնակցութիւնն եւ Պատրիարքութիւնը:

Յեղափոխութենէն առաջ Բ. Դուռը կը ճանչնար Պատրիարքութիւնը իբր պաշտօնական առաջնորդ Հայ հասարակութեան: Երբ 1908ին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը օրինաւոր դարձաւ, Պատրիարքութիւնը փորձեց իր հեղինակութիւնը տարածել

⁴⁹ Հմմտ. էջ 387-400:

⁵⁰ Unionist Relations with the Greek, Armenian, and Jewish Communities of the Ottoman Empire, 1908-1914, էջ 401-434:

⁵¹ Հմմտ. էջ 402:

⁵² Անդ, էջ 403:

անոնց վրայ⁵³: Դաշնակցութիւնը, հակառակ միութենական քաղաքականութեան, կ'ուզէր տեղական ինքնավարութիւն եւ կամ նոյնիսկ ամբողջական անկախութիւն⁵⁴:

Յօդուածիս հեղինակը կը ներկայացնէ նաեւ բարեկամական ձգտումներ Հայ-թրքական յարաբերութիւններու մէջ մինչեւ Ատա-նայի շարքը, «որ մաս էր 13 Ապրիլ 1909ի հակայեղափոխութեան»⁵⁵: Ապա, էջ 421-422, կը վերլուծէ սոյն եւ նման խնդիրներ ու կ'անդրադառնայ Միութենական-Դաշնակցական եւ հայկական-թուրք պետական յարաբերութիւններու զարգացումին: Էջ 423-424 կը ներկայացնէ Անատոլի դաւառներու խնդիրները եւ Հայերը իբր ենթակայ տարր Ռուս-Օսմանական քաղաքականութեան: Կ'անդրադառնայ հոս նաեւ Հայ-քրտական ընդհարումներու:

Բարդ էր քաղաքական կացութիւնը, զոր հեղինակը կը ներկայացնէ մինչեւ 1914: Իսկ «Պատերազմի սկիզբը Եւրոպայի մէջ նոր եւ աւելի ողբերգական դրութիւն մը բացաւ թուրք-հայկական յարաբերութիւններուն մէջ»⁵⁶:

Ա. Հատորի հինգերորդ մասը յատկացուած է ներկայացնելու դիւանական աղբիւրները⁵⁷:

Ուսումնասիրութեան Բ. Հատորը⁵⁸ մեզ այնքան չի հետաքրքրեր, որքան առաջինը: Անշուշտ Հայերու ներկայութիւնն ու գործունէութիւնը արարախօս երկիրներու մէջ, որոնք այս Հատորին մէջ կը ներկայացուին, չէ կարելի ուրանալ եւ ընթերցողները պիտի հանդիպին այսպիսիներու, սակայն ոչ այնքան, որքան կայսրութեան կենդրոնական նահանգներու մէջ: Ա. Հատորի նման էջ VIII կայ Համառօտագրութեան ցանկ մը եւ գրա-

դարձութեան ծանօթութիւն մը: Էջ IX՝ ծանուցում, ապա ներածութիւն՝ B. Braude էջ 1-5:

Այս Հատորին մէջ ուսումնասիրուած են Միւլէթ դրութիւնը Երուսաղէմի մէջ. նաեւ Դամասկոսի, Սիւրիոյ, Լիբանանի, Արաբիոյ եւ Եգիպտոսի նահանգներու շրջաններէն զանազան նիւթեր կը շօշափուին:

Էջ 207-223 կայ Մատենադրութեան ցանկ մը: Էջ 214-220 յատկացուած է հայկական մատենադրութեան:

225-248 էջերուն վրայ տրուած է Անձնա-Տեղանուններուն այբուբենական ցանկ մը երկու Հատորներուն:

Արդ, ուսումնասիրութիւնը կրնայ բանասէրներու ծառայել նկատմամբ շատ մը կէտերու՝ պատմական կամ մշակութային հարցերու մէջ: Կան անշուշտ հարցեր, որոնք տակաւին պէտք է մշակուին, ինչպէս հրատարակիչները կ'անդրադառնան Ա. Հատորի ներածութեան մէջ. «It is our hope that the topics discussed here will spur further research in the many important areas which have necessarily been omitted»⁵⁹: Մենք ալ յայտով ենք, թէ բազմաթիւ տակաւին անծանօթ վաւերաթուղթերու ապագայ ուսումնասիրութիւնը պիտի սփռէ նոր լոյս այս հարցերու վրայ, որոնք յարգելի հեղինակները յաջող կերպով ներկայացուցած են: Դասախօսութիւնները կատարուած են անշուշտ խղճմտօրէն, ինչպէս ցոյց կու տան օգտավոր ծուծա բազմաթիւ աղբիւրները:

Հակառակ քանի մը բանախօսութիւններու մէջ ոչ-առարկայական տեսութիւններու եւ ոչ-Համապատմական ներկայացումներու դոյութեան, կարելի է երկհատոր այս աշխատութիւնը իբր մեկնակէտ առնել խնդրոյ առարկայ զանազան հարցերուն աւելի լայն եւ յստակ ուսումնասիրութեան, որոնք սերտօրէն կապուած են Հայոց Պատմութեան՝ Հայ-թուրք յարաբերութեան հետ...:

ՍՍԳԱՅԵԱՆ ԵՂ. ՆԵՐՍԷՍ

⁵⁰ Անդ, էջ 2:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. Բառաբանա-մատենագրական պրպտումներ

Վիեննայի Միթարեան Միաբանութեան Մատենադարանին Համառօտ պատմութիւնը պատրաստելու առաջադրանքս իրագործած ժամանակ՝ հետադատութիւններուս եւ աշխատանքներուս ընթացքին գաղափարը ծնաւ նաեւ պատրաստելու պատմական ակնարկ մը հայկական մատենադարաններու մասին: Տեղին է ըսել, որ Հայ պատմագրութեան եւ բանասիրութեան ամենախոսքն զաշուր եւ մթաքօղ ընալուանն է հայկական մատենադարաններու պատմութիւնը: Անոնց դարաւոր դոյութեան (ծնունդը, կեանքը, մահը կամ գոյատեւումը) մասին Համապարփակ եւ ամբողջադիր ուսումնասիրութիւն մը չէ հրատարակուած տակաւին: Պարզապէս կը դտնենք ցիրուցան քանի մը անբաւարար յօդուածներ, դրուիներ կամ ենթադրուիներ ու զանազան հաւաքական եւ անհատական երկերու մէջ կցկտուր յիշատակումներ...: Ստուգել, հայկական մատենադարաններու պատմութիւնը դեռ լիայոյս կը սպասէ իր քննարկու եւ բանասէր մշակին: Այս ուղղութեամբ «Բառաբանա-մատենագրական պրպտումներ»ու այս նախածեղարկը կ'ուզէ ըլլալ պարզապէս նախափորձ մը՝ իր բոլոր թերութիւններով:

Նիւթին մէջ մտնելէ առաջ կը փափաքիմ նախ՝ ժամանակասպառ եւ տաղտկալի որոնումներուս աշխատանքին մէջ իր բերած աջակցութեան Համար, յայտնել սրտազին շնորհակալութիւն երիտասարդ միաբանակիցներու հետ: Ներսէս Սաղայեանին, որմէ ցիւ՝ եղբ. Ներսէս Սաղայեանի ակնկալակնկալեմ — եւ այս արդարացի ակնկալութիւնս մաղթանք է աղօթախառն — հաղորդութեան եւ բանասիրութեան մէջ յազիրութեան եւ բանասիրութեան մէջ յազիրութեան մը արդասարբեր...: Երկրորդ՝ քապապայ մը արդասարբեր...: Երկրորդ՝ քանի յօդուածագրութիւն մըն է շարունակական հոս կը բաւականանամ միայն դիւտաւոր Համառօտագրութիւնները այբբենականօրէն զննելով:

Ազգ. Մատ. = Ազգային Մատենադարան, Վիեննա:

Այրարատ = Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ Ս. Ղազար 1890:

Անձնանուններ = Հ. Աճառեան, Հայոց Անձնանունների Բառարան, Պէյրութ 1972:

Առձեռն 1 = Հ. Մ. Ազգերեան, Առձեռն Բառարան Հայկազնեան Լեզուի, Ա. տպ., Վենետիկ-Ս. Ղազար 1846:

Առձեռն 2 = Հ. Մ. Ազգերեան, Առձեռն Բառարան Հայկազնեան Լեզուի, Բ. տպ., Վենետիկ-Ս. Ղազար 1865:

ԼՀԳ = Լրագրեր Հասարակական Գիտութիւնների, Երեւան:

ՀԱ = Հանդէս Ամսօրեայ, Վիեննա:

ՀԱԲ = Հր. Աճառյան, Հայերէն Արմատական Բառարան, Երեւան:

Համարարան = Թ. Վ. Աստուածատուրեան, Համարարան Հին եւ Նոր Կտակարանաց, Երուսաղէմ 1895:

Հայապատում = Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Պատմութիւն Հայոց, Վենետիկ Ս. Ղազար 1901, (փոքրադիր):

ՀՍՀ = Հայկական Սովետական Հանրագիտարան, Երեւան:

Մատենագրան 1 = Օ. Եզանյան/Ա. Չեյթուլյան/Փ. Անթարյան, Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անվան Մատենադարանի, Հտ. Ա., Երեւան 1965:

Մատենագրան 2 = Օ. Եզանյան/Ա. Չեյթուլյան/Փ. Անթարյան, Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անվան Մատենադարանի, Հտ. Բ., Երեւան 1970:

Յիշատակարաններ ԺԵ. դարի = Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ. դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երեւան:

Յիշատակարանք = Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք Ձեռագրաց, Հտ. Ա., Անթիլիաս 1951:

ՆԲՀԼ = Հ. Գ. Աւետիքեան/Հ. Խ. Միւրմէլեան/Հ. Մ. Ազգերեան, Նոր Բառերը Հայկազեան Լեզուի, Հտ. Ա., Վենետիկ Ս. Ղազար 1836:

ՊԲՀ = Պատմա-Բանասիրական Հանդէս, Երեւան:

Սեփուխան, Յուցակ 3 = Հ. Օ. Սեքուլեան, Յուցակ Հայերէն Ձեռագրաց Միթարեան

⁵³ Հմմտ. էջ 418:
⁵⁴ Հմմտ. էջ 418-419:
⁵⁵ Անդ, էջ 420:
⁵⁶ Անդ, էջ 425:
⁵⁷ Sources, Ի. Գրութի, էջ 437-449:
⁵⁸ Christians and Jews in The Ottoman Empire. The Functioning of a Plural Society, Ed. by B. Braude and B. Lewis. Volume II, The Arabic-Speaking Lands, New York 1982: